EIMC N01/17
Հունվար 2017

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԷԿՈՄՈՆԻՏՈՐԻՆԳ

(ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ)

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

- ✓ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ
- ✓ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ
- ✓ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐ

Բովանդակություն

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ 4
Երևան 4
Գյումրի 11
Վանաձոր 12
Ալավերդի 13
Հրազդան 16
Արարատ 19
Մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները հանրապետության տարբեր բնակավայրերում 21
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐ 23
ՀՀ գետերի ջրի քիմիական որակը հունվարին 23
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք 27
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք 27
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք 27
ՀՀ ջրամբարների ջրի քիմիական որակը հունվարին 28
Ծաղկաձորում շրջակա միջավայրի որակի մոնիտորինգ 32
Մթնոլորտային օդում որոշվող ցուցանիշների ցանկ 38
Մակերևութային ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ 38
Տեղումներում որոշվող ցուցանիշների ցանկ 39
Մթնոլորտային օդում որոշ աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՍԹԿ) 40
Էկոլոգիական նորմեր 41
Մակերևութային ջրերի աղտոտվածության չափանիշներ 42
«Արտակարգ բարձր աղտոտվածություն» և «բարձր աղտոտվածություն» արտահայտությունների սահմանումը 43

ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԵՎ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՈՐԱԿԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՅԱՆՑ



ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Հունվարին մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան և Մարտունի քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է պասիվ նմուշառման 178 դիտակետ և 16 ստացիոնար դիտակայան, որոնցից 6 ստացիոնար դիտակայանում (Երևան և Ալավերդի քաղաքներում) կատարվում են շուրջօրյա ավտոմատ դիտարկումներ: Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար շուրջօրյա ակտիվ նմուշառմամբ վերցվել է օդի 1224 փորձանմուշ: Հանրապետության 8 բնակավայրի պասիվ նմուշառման դիտակետերից վերցվել է օդի 1389 փորձանմուշ: Երևան և Ալավերդի քաղաքներում տեղադրված ավտոմատ կայաններում կատարվել է օդի՝ համապատասխանաբար 28914 և 13265 դիտարկում:

Հունվարին Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան, Մարտունի և Ծաղկաձոր քաղաքների մթնոլորտում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական և միջին շաբաթական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզներն՝ ըստ պասիվ նմուշառիչների տվյալների, հասանելի են *http://www.armmonitoring.am/* ինտերնետային կայքում:

Երևան

Երևան քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է պասիվ նմուշառման 45 դիտակետ և յոթ դիտակայան (№1, №2, №7, №8, №16-1 №18 և №19), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ (24-ժամյա), իսկ մնացած հինգ դիտակայանում (№1, №7, №8, №16-1 և №19)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

Հունվարին ակտիվ նմուշառմամբ վերցվել է օդի 740, պասիվ նմուշառմամբ՝ 348 փորձանմուշ: Ավտոմատ եղանակով կատարվել է ածխածնի մոնօքսիդի 15769, ծծմբի երկօքսիդի՝ 10643, ազոտի օքսիդների՝ 2502 դիտարկում: Ածխածնի մոնօքսիդի ամսվա առավելագույն կոնցենտրացիան դիտվել է հունվարի 21-ին ժամը 22^{00}-ին՝ 7.769 մգ/մ^3 (Նոր Նորք համայնքում), ծծմբի երկօքիդինը՝ հունվարի 27-ին ժամը 23^{10}-ին՝ 0.402 մգ/մ^3 (Կենտրոն համայնքում):

Հունվարին փոշու միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն 1.3 անգամ: Որոշված մյուս ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Մթնոլորտային օդում որոշվող միացությունների դիտարկումների արդյունքները (ակտիվ նմուշառում)

Որոշվող միացություն	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ³	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ³	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ³ (դիտակայանի համար)		ՍԹԿ-ից գերազանցում-ների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.030	0.069	(դիտ. N18)	3
Ազոտի երկօքսիդ	0.04	0.019	0.142	(դիտ. N 7)	11
Փոշի	0.15	0.196	0.901	(դիտ. N1)	51
Գետնամերձ օզոն	0.03	0.008	0.027	(դիտ. N8)	-

Երևան քաղաքի մթնոլորտային օդում ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները ըստ դիտակետերի (ակտիվ նմուշառում).



Երևան քաղաքի Կենտրոն համայնքի մթնոլորտային օդում ածխածնի մոնօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները (ավտոմատ դիտարկում).





Երևան քաղաքի որոշ համայնքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները (ակտիվ ամուշառում).



Երևան քաղաքի որոշ համայնքների մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները (ակտիվ նմուշառում).






Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը (պասիվ նմուշառում)
ՀՈՒՆՎԱՐ (2017)/ԵՐԵՎԱՆ
Պայմանանշաններ
Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)
0.01
0.03
0.04
0.05
0.06
0.08
ք. Երևանի սահմանագիծ
Լճեր և ջրամբարներ
Ճանապարհներ և փողոցներ
Երկաթգծեր
Գետային ցանց
Արդյունաբերական կետեր
ՊՆ դիտակետեր
Ակտիվ նմուշառման դիտակետեր
Արաբկիր
Կենտրոն
Նոր Նորք
Մալաթիա-Սեբաստիա
Էրեբունի
Նուբարաշեն
Աջափնյակ
Ավան
Նորք-Մարաշ
Երևանյան լճ
Ազատի ջրմբ.
Ազատ
0 1 2 4 6 8 կմ


Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO2) միջին ամսական
կոնցենտրացիոն բաշխվածությունը (պասիվ նմուշառում)
ՀՈՒՆՎԱՐ(2017)/ԵՐԵՎԱՆ
Պայմանանշաններ
ք. Երևանի սահմանագիծ
Լճեր և ջրամբարներ
Ճանապարհներ և փողոցներ
Երկաթգծեր
Գետային ցանց
Արդյունաբերական կետեր
ՊՆ դիտակետեր
Ակտիվ նմուշառման դիտակետեր
Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ3)
0.005
0.02
0.03
0.04
0.05
0.07
0 1 2 4 6 8 կմ
Ազատի ջրմբ.
Ազատ
Հրազդան
Երևանյան լիճ
Ջրվեժ
Ողջաբերդ
Աջափնյակ
Արաբկիր
Ավան
Նոր Նորք
Կենտրոն
Նորք-Մարաշ
Մալաթիա-Սեբաստիա
Շենգավիթ
Էրեբունի
Նուբարաշեն
Մեծամոր
ՀԷԿ
Սևանի արդյունաբերություն
N

Գյումրի

Գյումրի քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է ակտիվ նմուշառման մեկ դիտակայան և պասիվ նմուշառման 24 դիտակետ:

Ակտիվ (24-ժամյա) նմուշառման եղանակով վերցվել է օդի 23, պասիվ նմուշառման եղանակով՝ 192 փորձանմուշ:

Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն 1.8 անգամ: Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն չի գերազանցել:



Վանաձոր

Վանաձոր քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է ակտիվ նմուշառման երեք դիտակայան և պասիվ նմուշառման 24 դիտակետ:

Ակտիվ (24-ժամյա) նմուշառման եղանակով վերցվել է օդի 207, պասիվ նմուշառման եղանակով՝ 191 փորձանմուշ:

Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն 1.6 անգամ: Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան ՍԹԿ-ն չի գերազանցել:



Ալավերդի

Ալավերդի քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և ածխածնի մոնօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է ակտիվ նմուշառման երեք դիտակայան և պասիվ նմուշառման 38 դիտակետ:

Ակտիվ (24-ժամյա) նմուշառման եղանակով վերցվել է օդի 130, պասիվ նմուշառման եղանակով՝ 299 փորձանմուշ: Ավտոմատ դիտարկումների կայանում կատարվել է ածխածնի մոնօքսիդի 5332, ծծմբի երկօքսիդի 5329 դիտարկում և ազոտի օքսիդների՝ 2604 դիտարկում:

Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն 2.4 անգամ: Ազոտի երկօքսդի միջին ամսական կոնցենտրացիան չի գերազանցել ՍԹԿ-ն:





Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական
կոնցենտրացիոն բաշխվածությունը (պասիվ նմուշառում)
ՀՈՒՆՎԱՐ(2017)/ԱԼԱՎԵՐԴԻ
N
Բենդիկ
Ալավերդի
Կաճաճկուտ
Աքորի
Հաղպատ
Ակներ
Օձուն
Դեբեդ
Պայմանանշաններ
Գետային ցանց
Ճանապարհներ և փողոցներ
Միջպետական ճանապարհ
Երկաթգծեր
Բնակավայրերի սահման
Պասիվ նմուշառման դիտակետեր
Ակտիվ նմուշառման դիտակետեր
Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)
0.01
0.03
0.04
0.05
0.06
0.08
0 0.6 1.2 2.4 3.6 4.8 կմ


Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական
կոնցենտրացիոն բաշխվածությունը (պասիվ նմուշառում)
ՀՈՒՆՎԱՐ(2017)/ԱԼԱՎԵՐԴԻ
N
Բենդիկ
Ալավերդի
Աքորի
Կաճաճկուտ
Հաղպատ
Ակներ
Հագվի
Ամոջ
Օձուն
Դեբեդ
Պայմանանշաններ
Գետային ցանց
Ճանապարհներ և փողոցներ
Միջպետական ճանապարհ
Երկաթգծեր
Բնակավայրերի սահման
Պասիվ նմուշառման դիտակետեր
Ակտիվ նմուշառման դիտակետեր
Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ3)
0.005
0.02
0.03
0.04
0.05
0.07
0 0.6 1.2 2.4 3.6 4.8
կմ

Հրազդան

Հրազդան քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է ակտիվ նմուշառման մեկ դիտակայան և պասիվ նմուշառման 17 դիտակետ:

Ակտիվ (24-ժամյա) նմուշառման եղանակով վերցվել է օդի 93, պասիվ նմուշառման եղանակով՝ 135 փորձանմուշ:

Որոշված ցուցանիշներից ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները (ակտիվ նմուշառում).






Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO2) միջին ամսական
կոնցենտրացիոն բաշխվածությունը (պասիվ նմուշառում)
ՀՈՒՆՎԱՐ (2017)/ՀՐԱԶԴԱՆ
N
Կաքավաձոր
Զովաբեր
Մարմարիկ
Ջրառատ
Հրազդան
Աթարբեկյան
Ծաղկաձոր
Մակրավան
Աղբյուրակ
Հրազդան
Քաղսի
1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
Պայմանանշաններ
Բնակավայրերի սահման
Աղբյուրակ ջրամբար
Ճանապարհներ և փողոցներ
Գետային ցանց
Դիտակետեր
Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ3)
0.01
0.03
0.04
0.05
0.06
0.08
0 0.4 0.8 1.6 2.4 3.2 կմ


Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO2) միջին ամսական
կոնցենտրացիոն բաշխվածությունը (պասիվ նմուշառում)
ՀՈՒՆՎԱՐ (2017) / ՀՐԱԶԴԱՆ
N
Կաքավաձոր
Ջրառատ
Աթարբեկյան
Ծաղկաձոր
Մակրավան
Աղբյուրակ
Հրազդան
Քաղսի
Հրազդան
Մարմարիկ
1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
Պայմանանշաններ
Բնակավայրերի սահման
Աղբյուրակ ջրամբար
Ճանապարհներ և փողոցներ
Գետային ցանց
Դիտակետեր
Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ3)
0.005
0.02
0.03
0.04
0.05
0.07
0
0.4
0.8
1.6
2.4
3.2
կմ

Արարատ

Արարատ քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է ակտիվ նմուշառման մեկ դիտակայան և պասիվ նմուշառման 12 դիտակետ:

Ակտիվ (24-ժամյա) նմուշառման եղանակով վերցվել է օդի 31, պասիվ նմուշառման եղանակով՝ 96 փորձանմուշ:

Որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները (պասիվ նմուշառում).





Մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները հանրապետության տարբեր բնակավայրերում

Հունվարին պասիվ նմուշառիչներով օդային ավազանի որակի դիտարկումներ կատարվել են հանրապետության Չարենցավան և Մարտունի քաղաքներում:

Չարենցավան քաղաքի 10 դիտակետում տեղադրված պասիվ նմուշառիչներով վերցվել է օդի 80 փորձանմուշ, Մարտունի քաղաքի 8 դիտակետից՝ 48 փորձանմուշ:

Նշված բնակավայրերի մթնոլորտում որոշված ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Հունվարին ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների գրաֆիկական պատկերները՝ ըստ քաղաքների.





ՀՀ մակերևութային ջրերի քիմիական որակը (հունվար 2017)



ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐ

2017 թվականի հունվարին մակերևութային ջրերի որակի դիտարկումներ իրականացվել են հանրապետության 7 գետի և Երևանյան լճի 23 դիտակետում, որտեղից վերցվել է 23 փորձանմուշ: Վերցված փորձանմուշներում որոշվել է միջին հաշվով 45 ցուցանիշ: Իրականացված դիտարկումների արդյունքները բերված են աղյուսակների տեսքով:

ՀՀ կառավարության «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Եթե ջրի որակի տարբեր ցուցանիշներ ընկնում են որակի տարբեր դասերի մեջ, ապա վերջնական դասակարգման մեջ հաշվի է առնվում վատագույնը: Գործում է հետևյալ սկզբունքը. «Եթե մեկը վատ վիճակում է, ապա բոլորն են վատ վիճակում»: Ջրամբարներում ջրի որակի գնահատումը կատարվում է միայն սնուցող նյութերով:

ՀՀ գետերի ջրի քիմիական որակը հունվարին

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հյուսիսային	Աղստև	1,2 կմ ք. Դիլիջանից վերև (15)	–	2-րդ	2-րդ
		0,5 կմ ք. Դիլիջանից ներքև (16)	ԹԿՊ$_5$, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
			ԹՔՊ, ամոնիում իոն	4-րդ	
		1 կմ ք. Իջևանից վերև (17)	ԹԿՊ$_5$, նիտրատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հյուսիսային	Աղստև	Սահմանի մոտ (18)	$БПК_5$, ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
		Գետաբերան (20)	Նիտրատ իոն	3-րդ	3-րդ
Ախուրյան	Մեծամոր	10 կմ ք. Վաղարշապատից հարավ (40)	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, հանքայնացում	3-րդ	4-րդ
			Բոր, սուլֆատ իոն	4-րդ	
		11 կմ ք. Վաղարշապատից հարավ-արևելք (41)	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, ՔԱԱ, հանքայնացում	3-րդ	4-րդ
			Բոր, սուլֆատ իոն	4-րդ	
		0,5 կմ գյ. Ռանչպարից ներքև (42)	ԹՔՊ, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, հանքայնացում	3-րդ	5-րդ
			Սուլֆատ իոն	4-րդ	
			Բոր	5-րդ	
Հրազդանի	Քասախ	0,5 կմ ք. Ապարանից վերև (43)	Ֆոսֆատ իոն	3-րդ	3-րդ
		0,5 կմ ք. Ապարանից ներքև (44)	ԹՔՊ, ՔԱԱ	3-րդ	5-րդ
			Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	5-րդ	
		1 կմ ք. Աշտարակից վերև (45)	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, վանադիում, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հրազդանի	Քասախ	3,5 կմ ք. Աշտարակից ներքև (46)	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, վանադիում, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
		Գետաբերան (47)	Ֆոսֆատ իոն, վանադիում	3-րդ	3-րդ
	Հախվերդ	0,5 կմ գյ. Փարպիից ներքև (50)	Ֆոսֆատ իոն, վանադիում	3-րդ	4-րդ
			Ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
	Հրազդան	0,5 կմ ք. Քաղսիից ներքև (52)	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, վանադիում	3-րդ	3-րդ
		0,5 կմ գյ. Արգելից ներքև (53)	Նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, վանադիում	3-րդ	3-րդ
		0,5 կմ Արզնի ՀԷԿ-ից ներքև (54)	ԹՔՊ, նիտրատ իոն, մանգան, վանադիում, նատրիում, քլորիդ իոն	3-րդ	3-րդ
		6 կմ ք. Երևանից ներքև. գյ. Դարբնիկի մոտ (55)	ԹԿՊ$_5$, ԹՔՊ, նիտրիտ իոն, նիտրատ իոն, մանգան, վանադիում, նատրիում, քլորիդ իոն, հանքայնացում	3-րդ	5-րդ
			Ֆոսֆատ իոն, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ամոնիում իոն	5-րդ	

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հրազդանի	Հրազդան	Գետաբերան (56)	ԹՔՊ, նիտրիտ իոն, նիտրատ իոն, մանգան, վանադիում, նատրիում, ՔԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, քլորիդ իոն, սուլֆատ իոն, հանքայնացում	3-րդ	4-րդ
			Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	4-րդ	
		գյ. Գեղանիստ (225)	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, վանադիում, նատրիում, ՔԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, քլորիդ իոն, հանքայնացում	3-րդ	3-րդ
	Գետառ	Գետաբերան (59)	ԹԿՊ$_5$, ԹՔՊ, մանգան, վանադիում, նատրիում, հանքայնացում	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն, նիտրատ իոն, ՔԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, սուլֆատ իոն	4-րդ	
			Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն	5-րդ	
	Մարմարիկ	Գետաբերան (58)	Մանգան	4-րդ	4-րդ

1 -րդ դաս՝ «գերազանց» քիմիական որակ, 2 -րդ դաս՝ «լավ» քիմիական որակ, 3 -րդ դաս՝ «միջակ» քիմիական որակ, 4 -րդ դաս՝ «անբավարար» քիմիական որակ, 5 -րդ դաս՝ «վատ» քիմիական որակ

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Աղստև գետի Դիլիջանից վերև հատվածում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), Դիլիջանից ներքև հատվածում՝ «անբավարար» որակի է (4-րդ դաս)՝ պայմանավորված ԹՔՊ-ով և ամոնիում իոնով, Իջևանից վերև, սահմանի մոտ և գետաբերանի հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս). Իջևանից վերև՝ պայմանավորված ԹԿՊ5-ով, նիտրատ իոնով և ընդհանուր ֆոսֆորով, սահմանի մոտ՝ պայմանավորված $ԹԿՊ_5$-ով, ԹՔՊ-ով, ամոնիում, նիտրատ և ֆոսֆատ իոններով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանի հատվածում՝ պայմանավորված նիտրատ իոնով:

Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

Մեծամոր գետի Վաղարշապատից հարավ և հարավ-արևելք ընկած հատված-ներում ջուրը «անբավարար» որակի է (4-րդ դաս)՝ պայմանավորված բորով և սուլֆատ իոնով, Ռանչպարից ներքև՝ «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված բորով:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Քասախ գետի Ապարանից վերև և Աշտարակից վերև և ներքև, ինչպես նաև գետաբերանի հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս). Ապարանից վերև՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, Աշտարակից վերև՝ պայմանավորված նիտրատ և ֆոսֆատ իոններով, վանադիումով և ընդհանուր ֆոսֆորով, Աշտարակից ներքև՝ պայմանավորված նիտրատ և ֆոսֆատ իոններով, վանադիումով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանի հատվածում՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով և վանադիումով, Ապարանից ներքև՝ «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Հախվերդ գետի Փարպիից ներքև հատվածում ջուրը «անբավարար» որակի է (4-րդ դաս)՝ պայմանավորված ընդհանուր ֆոսֆորով:

Հրազդան գետի Քաղսիից և Արգելից ներքև, ինչպես նաև Արզնի ՀԷԿ-ից ներքև հատվածներում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս). Քաղսիից ներքև՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով և վանադիումով, Արգելից ներքև՝ պայմանավորված նիտրատ և ֆոսֆատ իոններով, մանգանով և վանադիումով, Արզնի ՀԷԿ-ից ներքև՝ պայմանավորված ԹՔՊ-ով, նիտրատ իոնով, մանգանով, վանադիումով, նատրիումով և քլորիդ իոնով, Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, գետաբերանի հատվածում ջուրը «անբավարար» որակի է (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով: Գեղանիստ գյուղի մոտ հատվածում ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ, նիտրատ և ֆոսֆատ իոններով, մանգանով, վանադիումով, նատրիումով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով, քլորիդ իոնով և հանքայնացումով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Մարմարիկ գետի գետաբերանի հատվածում ջուրը «անբավարար» որակի է (4-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով:

ՀՀ ջրամբարների ջրի քիմիական որակը հունվարին

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Երևանյան լիճ	ամբարտակի մոտ (112)	Ամոնիում իոն, նիտրատ իոն ֆոսֆատ իոն, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ

(**) ՀՀ ջրամբարների ջրի քիմիական որակի գնահատումը կատարվել է համաձայն ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերի (ՀՀ կառավարության 2011թ.-ի հունվարի 27-ի N 75-Ն որոշման հավելված N2):

ԱՂՍՏԵՎ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅԻՆ ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ (ՀՈՒՆՎԱՐ 2017)

ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Գյուղեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Աղստև գետի ավազան
- Ջրի նմուշառման դիտակետ

Մակերևութային ջրերի որակի դասակարգումը ըստ քիմիական կարգավիճակի դասերի

- 1-ին դաս
- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

ՔԱՍԱԽ ԵՎ ՄԵԾԱՄՈՐ ԳԵՏԵՐԻ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅԻՆ ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ (ՀՈՒՆՎԱՐ 2017)



ՀՐԱԶԴԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅԻՆ ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ (ՀՈՒՆՎԱՐ 2017)



Ծաղկաձորում շրջակա միջավայրի որակի մոնիտորինգ

Օդային ավազան

Ծաղկաձոր քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է ակտիվ նմուշառման մեկ դիտակայան և պասիվ նմուշառման 14 դիտակետ:

Ակտիվ (24-ժամյա) նմուշառման եղանակով վերցվել է օդի 93, պասիվ նմուշառման եղանակով՝ 112 փորձանմուշ:

Որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Տանձաղբյուր գետի ջրի քիմիական որակը 2016թ.-ին

Հունվարին Տանձաղբյուր գետի վերին հոսանքում ջուրը «լավ» որակի է (2-րդ դաս), իսկ Ծաղկաձոր քաղաքից ներքև հատվածում՝ «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով և մանգանով:

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Հրազդան	Տանձաղբյուր	Ծաղկաձոր քաղաքից վերև (311)	–	2-րդ	2-րդ
		Ծաղկաձոր քաղաքից ներքև (312)	ԹԿՊ$_5$, ԸԱԱ	3-րդ	5-րդ
			Ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ամոնիում իոն, մանգան	5-րդ	

Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները (ակտիվ նմուշառում).





Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը (պասիվ նմուշառում)
ՀՈՒՆՎԱՐ (2017)/ԾԱՂԿԱԶՈՐ



Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը (պասիվ նմուշառում)
ՀՈՒՆՎԱՐ (2017)/ԾԱՂԿԱԶՈՐ



ՏԱՆՁԱՂԲՅՈՒՐ ԳԵՏԻ ՋՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ (ՀՈՒՆՎԱՐ 2017)
Սարմարիկ
Հրազդան
Ջրառատ
N
311
312
Տանձաղբյուր
Ծաղկաձոր
Աթարբեկյան
Մակրավան
Հրազդան
Աղբյուրակ
Հրազդան
0 0.5 1 2 3 4 կմ
Պայմանանշաններ
Գետեր
Լճեր և ջրամբարներ
Բնակավայրեր
Մակերևութային ջրերի աղտոտվածության դասակարգումը ըստ քիմիական կարգավիճակի դասերի
1-ին դաս
2-րդ դաս
3-րդ դաս
4-րդ դաս
5-րդ դաս

Մթնոլորտային տեղումներ

Հունվարին Ծաղկաձորում վերցվել է տեղումների՝ 3 ձյան փորձանմուշ: Վերցված փորձանմուշներում որոշվել են 36-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշներից մի մասի կոնցենտրացիաները ստորև բերվում են աղյուսակի տեսքով.

Ամսաթիվ	Ցուցանիշներ						
	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն (մկՍմ/սմ)	Սուլֆատ իոն (մգ/լ)	Քլորիդ իոն (մգ/լ)	Նիտրատ իոն (մգ/լ)	Ֆտորիդ իոն (մգ/լ)	Ամոնիում իոն (մգ/լ)
26-27.01.17	7.23	148.9	6.23	8.16	3.12	0.019	3.424
27-28.01.17	6.19	44.5	2.78	4.40	2.02	0.090	1.080
28-29.01.17	7.07	15.6	1.90	0.66	2.10	0.018	0.417

Մթնոլորտային օդում որոշվող ցուցանիշների ցանկ

Ավտոմատ եղանակով	*Ոչ ավտոմատ եղանակով*	
	Շուրջօրյա ակտիվ նմուշառման եղանակ	*Պասիվ նմուշառման եղանակ*
1. Ածխածնի մոնօքսիդ 2. Ծծմբի երկօքսիդ 3. Ազոտի օքսիդներ (մոնօքսիդ, երկօքսիդ, օքսիդների գումար) 4. Գետնամերձ օզոն	1. Ընդհանուր փոշի 2. Փոշու մեջ գտնվող մետաղներ, տարրեր, անիոններ 3. Ծծմբի երկօքսիդ 4. Ազոտի երկօքսիդ 5. Գետնամերձ օզոն	1. Ծծմբի երկօքսիդ 2. Ազոտի երկօքսիդ

Մակերևութային ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ

1. Ջերմաստիճան
2. Գույն
3. Հոտ
4. Թափանցելիություն
5. Կախյալ նյութեր
6. Էլեկտրահաղորդականություն
7. Լուծված թթվածին
8. Լուծված թթվածնով հագեցվածության տոկոս
9. Թթվածնի հնգօրյա կենսաքիմիական պահանջարկ
10. Թթվածնի քիմիական պահանջարկ
11. Ջրածնային ցուցիչ
12. Հանքայնացում
13. Կոշտություն
14. Հիդրոկարբոնատներ
15. Սուլֆատներ
16. Քլորիդներ
17. Ֆտորիդներ
18. Ֆոսֆատներ
19. Ֆոսֆոր ընդհանուր
20. Նիտրիտներ
21. Նիտրատներ
22. Ամոնիում իոն
23. Սիլիցիում
24. Կալիում
25. Նատրիում
26. Լիթիում
27. Կալցիում
28. Մագնեզիում
29. Սելեն
30. Ալյումին
31. Քրոմ
32. Երկաթ
33. Մանգան
34. Պղինձ
35. Ցինկ
36. Արսեն
37. Ստրոնցիում
38. Կադմիում
39. Կապար
40. Կոբալտ
41. Նիկել
42. Վանադիում
43. Մոլիբդեն
44. Բարիում
45. Բերիլիում
46. Բոր
47. Անտիմոն
48. Անագ
49. Քլորօրգանական պեստիցիդներ
50. Նավթամթերքներ

Տեղումներում որոշվող ցուցանիշների ցանկ

1. Ջրածնային ցուցիչ
2. Նիտրատ իոն
3. Սուլֆատ իոն
4. Քլորիդ իոն
5. Ամոնիում իոն
6. Ֆտորիդ իոն
7. էլեկտրահաղորդականություն
8. Լիթիում
9. Բերիլիում
10. Բոր
11. Նատրիում
12. Մագնեզիում
13. Ալյումին
14. Կալիում
15. Կալցիում
16. Տիտան
17. Վանադիում
18. Քրոմ
19. Երկաթ
20. Մանգան
21. Կոբալտ
22. Նիկել
23. Պղինձ
24. Ցինկ
25. Արսեն
26. Սելեն
27. Ստրոնցիում
28. Մոլիբդեն
29. Կադմիում
30. Ֆոսֆոր
31. Անագ
32. Ծարիր
33. Բարիում
34. Կապար
35. Բիսմութ

<u>Մթնոլորտային օդում որոշ աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՍԹԿ)</u>

Աղտոտիչի անվանումը	Միջինացված ժամանակը	ՀՀ-ում, մգ/մ^3	ԱՀԿ-ում, մգ/մ^3	ԵՄ-ում, մգ/մ^3
Ածխածնի մոնօքսիդ (CO)	15 րոպե	-	100	-
	30 րոպե	5	60	-
	1 ժամ	-	30	-
	8 ժամ	-	10	10
	24 ժամ	3	-	-
Ազոտի երկօքսիդ (NO_2)	1 ժամ	-	0.2	0.2 (չպետք է գերազանցի տարվա մեջ 18 անգամից ավել)
	8 ժամ	-	-	-
	24 ժամ	0.04	-	0.125 (չպետք է գերազանցի տարվա մեջ 3 անգամից ավել)
Ազոտի մոնօքսիդ (NO)	1 ժամ	-	-	-
	8 ժամ	-	-	-
	24 ժամ	0.06	-	-
Ազոտի օքսիդներ (NO_x)	1 ժամ	-	-	-
	8 ժամ	-	-	-
	24 ժամ	-	-	-
Օզոն (O_3)	1 ժամ	-	-	-
	8 ժամ	-	0.12	-
	24 ժամ	0.03	-	-
Ծծմբի երկօքսիդ (SO_2)	10 րոպե	0.5	0.5	-
	1 ժամ	-	-	0.350 (չպետք է գերազանցի տարվա մեջ 3 անգամից ավել)
	8 ժամ	-	-	-
	24 ժամ	0.05	0.125	0.125 (չպետք է գերազանցի տարվա մեջ 3 անգամից ավել)
Ընդհանուր փոշի	24 ժամ	0.15	-	-

Էկոլոգիական նորմեր (ՀՀ կառավարության 2011թ.-ի դեկտեմբերի 27-ի N 75-Ն որոշում)

Որակի ցուցանիշներ	Որակի դաս					Միավոր
	I գերազանց	II լավ	III միջակ	IV անբավարար	V վատ	
Լուծված թթվածին	>7 կամ ՖԿ*	>6	>5	>4	<4	մգ O_2/լ
ԹԿՊ$_5$	3	5	9	18	>18	մգ O_2/l
ԹՔՊ$_{Cr}$	10	25	40	80	>80	մգ O_2/l
Ամոնիում իոն	0.2 կամ ՖԿ	0.4	1.2	2.4	> 2.4	մգ N/լ
Նիտրիտ իոն	0.01 կամ ՖԿ	0.06	0.12	0.3	>0.3	մգ N/լ
Նիտրատ իոն	1 կամ ՖԿ	2.5	5.6	11.3	>11.3	մգ N/լ
Ֆոսֆատ իոն	0.05 կամ ՖԿ	0.1	0.2	0.4	>0.4	մգP/լ
Ցինկ, ընդհանուր	ՖԿ	100	200	500	>500	մկգ/լ
Պղինձ, ընդհանուր	ՖԿ	ՖԿ+20	50	100	>100	մկգ/լ
Քրոմ, ընդհանուր	ՖԿ	ՖԿ+10 (50)	100	250	>250	մկգ/լ
Արսեն, ընդհանուր	ՖԿ	20	50	100	>100	մկգ/լ
Կադմիում, ընդհանուր	ՖԿ	ՖԿ+1	ՖԿ+2	ՖԿ+4	>ՖԿ+4	մկգ/լ
Կապար, ընդհանուր	ՖԿ	ՖԿ+10	25	50	>50	մկգ/լ
Նիկել, ընդհանուր	ՖԿ	ՖԿ+10 (20)	50	100	>100	մկգ/լ
Մոլիբդեն, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ կամ 10	4xՖԿ կամ 25	8xՖԿ կամ 50	>8xՖԿ	մկգ/լ
Մանգան, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ կամ 100	4xՖԿ կամ 200	8xՖԿ կամ 500	>8xՖԿ	մկգ/լ
Վանադիում,ընդհանուր	ՖԿ	2xՖԿ+5 կամ 10	4xՖԿ	8xՖԿ կամ 100	>8xՖԿ	մկգ/լ
Կոբալտ, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ կամ 20	4xՖԿ կամ 50	8xՖԿ կամ 100	>8xՖԿ	մկգ/լ
Երկաթ, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ կամ 0.5	0.5	1	>1	մգ/լ
Կալցիում	ՖԿ	100	200	300	>300	մգ/լ
Մագնեզիում	ՖԿ	50	100	200	>200	մգ/լ
Բարիում	ՖԿ	2xՖԿ կամ 100	4xՖԿ կամ 250	1000	>1000	մկգ/լ
Բերիլիում	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	100	>100	մկգ/լ
Կալիում	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	8xՖԿ	>8xՖԿ	մգ/լ
Նատրիում	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	8xՖԿ	>8xՖԿ	մգ/լ
Լիթիում	ՖԿ	ՖԿ	-	2500	>2500	մկգ/լ
Բոր	ՖԿ	450	700	1000	>2000	մկգ/լ
Ալյումին	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	5000	>5000	մկգ/լ
Սելեն, ընդհանուր	ՖԿ կամ 10	20	40	80	>80	մկգ/լ
Ծարիր, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	8xՖԿ	>8xՖԿ	մկգ/լ
Անագ, ընդհանուր	ՖԿ	2xՖԿ	4xՖԿ	8xՖԿ	>8xՖԿ	մկգ/լ
ԹՔՊ$_{Mn}$	5 կամ ՖԿ	10	15	20	>20	մգO_2/լ
Ընդհանուր անօրգանական ազոտ	1.5 կամ ՖԿ	4	8	16	>16	մգ N/լ
Ընդհանուր ֆոսֆոր	0.1 կամ ՖԿ	0.2	0.4	1	>1	մգ լ
Քլորիդ իոն	ՖԿ	2xՖԿ	150	200	> 200	մգ/լ
Սուլֆատ իոն	ՖԿ	2xՖԿ	150	250	> 250	մգ/լ
Սիլիկատ իոն	ՖԿ	2xՖԿ կամ 10	4xՖԿ կամ 20	8xՖԿ	>8xՖԿ	մգSi/լ
Ընդհանուր հանքայնացում	ՖԿ	2xՖԿ	1000	1500**	>1500	մգ/լ
Էլեկտրահաղորդականություն	ՖԿ	2xՖԿ	1000	1500**	>1500	մկՍիմ/սմ
Կոշտություն	2.8	10	20	40	<40	մգէկվ/լ
Կախված մասնիկներ	ՖԿ	1.2xՖԿ	2xՖԿ (30)	4xՖԿ	>4xՖԿ	մգ/լ
Հոտ (20°C և 60°C)	<2 (բնական)	2 (բնական)	2	4	>4	բալ
Գույն	(բնական)	>5 (բնական)	20	30	>200	աստ,

*ՖԿ-ֆոնային կոնցենտրացիա

**ոռոգման համար 1000

Ծանոթագրություն. ՀՀ 14 խոշոր գետային ավազանների գետերի, գետերի առանձին հատվածների և վտակների որակի ցուցանիշների ֆոնային կոնցենտրացիաները և էկոլոգիական նորմերի ամբողջական ցանկը տրված է ***http://www.armmonitoring.am/*** ինտերնետային կայքում:

Մակերևութային ջրերի աղտոտվածության չափանիշներ (ըստ 1990թ.-ին ընդունված ձկնատնտեսական նորմերի)

Բաղադրամասերը և ցուցանիշները	Վնասակարության լիմիտացված ցուցանիշը	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա, մգ/դմ^3
Լուծված թթվածին	Ընդհանուր պահանջները	6-ից ոչ պակաս
ԹԿՊ$_5$	-//-	3.0
ԹՔՊ	-//-	30.0
Ամոնիում իոն (NH_4^+)	Թունագիտական	0.5 (N/դմ^3 - 0.39)
Նիտրատ իոն (NO_3^-)	Սանիտարա-թունագիտական	40.0 (N/դմ^3 - 9.0)
Նիտրիտ իոն(NO_2^-)	Թունագիտական	0.08 (N/դմ^3 - 0.02)
Ֆոսֆատ իոն(PO_4^{2-})	Ընդհանուր պահանջները	3.5
Ընդհանուր երկաթ	Զգայարանական	0.5
Սելեն	-//-	0.001
Պղինձ	Թունագիտական	0.001
Ցինկ	-//-	0.01
Ալյումին	-//-	0.04
Վանադիում	-//-	0.001
Քրոմ	-//-	0.001
Մանգան	-//-	0.01
Կալիում	-//-	50.0
Կալցիում	-//-	180.0
Մագնեզիում	-//-	40.0
Նատրիում	-//-	120.0
Կոբալտ	-//-	0.01
Նիկել	-//-	0.01
Արսեն	-//-	0.05
Կադմիում	-//-	0.005
Կապար	-//-	0.1
Բրոմ	Սանիտարա-թունագիտական	0.2
Մոլիբդեն	-//-	0.5
Ստրոնցիում	-//-	2.0
Սուլֆատ իոն (SO_4^{2-})	-//-	100.0
Քլոր իոն (Cl^-)	-//-	300.0
Իոնների գումարը	Ընդհանուր պահանջներում	1000.0
Կախված մասնիկներ	Ընդհանուր պահանջներում	Կախված մասնիկների պարունակությունը բնական ֆոնից չպետք է գերազանցի 0.75 մգ/դմ^3

«Արտակարգ բարձր աղտոտվածություն» և «բարձր աղտոտվածություն» արտահայտությունների սահմանումը

Բնական միջավայրի արտակարգ բարձր աղտոտվածություն համարվում է.

Մթնոլորտային օդի համար

Սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի (ՍԹԿ) գերազանցումը.

- 20-29 անգամ. երբ այդ մակարդակը պահպանվում է 2 օրից ավելի
- 30-49 անգամ. երբ այդ մակարդակը պահպանվում է 8 ժամից ավելի
- 50 և ավելի անգամ:

Մակերևութային ջրերի համար

Սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի գերազանցումը 100 և ավելի անգամ (այն նյութերը. որոնց համար սահմանված է ջրում լրիվ բացակայություն. որպես սահմանային թույլատրելի կոնցենտրացիա ընդունվում է 0.01 մկգ/դմ^3)

- լուծված թթվածնի պարունակության իջեցումը մինչև 2 մգ/դմ^3 և ցածր
- թթվածնի հնգօրյա կենսաքիմիական պահանջի (ԹԿՊ$_5$) պարունակությունը 60 մգO$_2$/դմ^3 և ավելի
- ջրի հոտի՝ մինչև 4 բալ և ավելի ուժեղացումը. որը բնորոշ չէ տվյալ տեղանքի համար
- 6 կմ^2 տարածությամբ տեսահորիզոնի 1/3-ից ավելի տարածքով որևէ թաղանթի (նավթային. յուղային և այլ ծագման) առկայությունը
- փափկամարմինների. ձկների. գորտերի և այլ ջրային օրգանիզմների և ջրային բույսերի համատարած ոչնչացումը:

Բնական միջավայրի բարձր աղտոտվածություն համարվում է.

Մթնոլորտային օդի համար

- որոշվող նյութի պարունակության ՍԹԿ-ից 10 և ավելի անգամ գերազանցումը

Մակերևութային ջրերի համար

- ՍԹԿ-ի գերազանցումը 10-ից մինչև 100 անգամ (նավթամթերքների. ֆենոլների և պղնձի իոնների համար՝ 30 -ից 100 անգամ)
- ԹԿՊ$_5$-ի կոնցենտրացիայի 15-ից մինչև 60 մգO$_2$/դմ^3 պարունակությունը
- լուծված թթվածնի պարունակության իջեցումը 3-ից մինչև 2 մգ/դմ^3
- մինչև 6 կմ^2 տարածությամբ տեսահորիզոնում ջրի մակերևույթի 1/4-ից մինչև 1/3 տարածությամբ թաղանթի առկայությունը (նավթային. յուղային և այլ ծագման)
- 6կմ^2-ից ավելի տեսահորիզոնում ջրի մակերևույթի 1-ից մինչև 2կմ^2 տարածքով թաղանթի առկայությունը:

EMEP-Եվրոպայի մոնիտորինգի և գնահատման ծրագիր (European Monitoring and Evaluation Programme)

Ինֆորմացիայի պահպանման և վերլուծության բաժին

Կայք էջ՝ armmonitoring.am
Էլ. փոստ՝ monitoring-info@mail.ru
Հեռախոս՝ 26-13-94

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 29